DOI: 10.61760/18290108-phr.25.2-99

ՀԱՅԱՍՏԱՆ–ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

Հ. Ա. ՓԱՇԱՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Ներածություն

Հիմք ընդունելով նոր աշխարհակարգի ձևավորման գործում տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես նաև 2020 թ. պատերազմը, դրան նախորդած ու հաջորդած ժամանակաշրջաններում հայ-ռուսաստանյան հարաբերությունների փոխակերպման դրդապատճառները՝ խնդիր ենք դրել սույն հոդվածում պարզորոշելու դրանց հետագա զարգացման միտումներն ու հեռանկարները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է համընդհանուր աշխարհակարգի կերպափոխման և ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման համատեքստում Հարավկովկասյան տարածաշրջանում ՌԴ աշխարհաքաղաքական շահերի հետագա փոփոխությունների վերլուծության անհրաժեշտությամբ: Այս հանգամանքը կարևորվում է հատկապես ուկրաինական հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի և աշխարհաքաղաքական այն փոփոխությունների համատեքստում, որոնք բխում են Դ. Թրամպի վարչակազմի՝ աշխարհում ԱՄՆ-ի տեղի ու դերի վերագնահատման տեսլականից և դրանով պայմանավորված նոր զարգացումներից, ինչպես համընդհանուր աշխարհաքաղաքական, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում:

Հայաստան–Ռուսաստան հարաբերությունների վերափոխման աշխարհաքաղաքական դրդապատճառները: Ուկրաինական հակամարտության կարգավորման և աշխարհաքաղաքական վերափոխումների համատեքստում փորձագիտական հանրության ուշադրության կենտրոնում են հայտնվել նաև Հարավային Կովկասում ՌԴ աշխարհաքաղաքական շահերի հետագա փոխակերպումներն ու Հայաստան–Ռուսաստան հարաբերությունների հնարավոր զարգացումները, համաձայն որոնց՝ Ուկրաինայում իրավիճակի փոփոխությունը շղթայական ազդեցություն կունենա նաև մեր տարածաշրջանի վրա: Ռուսաստանը, հասնելով հաջողության և այլևս հսկայական միջոցներ

* Հոդվածն ստացվել է 03.06.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 15.07.2025:

չծախսելով արևմտյան ճակատում, հնարավորություն կստանա դրանց մի մասն ուղղելու այլ, այդ թվում՝ Հարավկովկասյան, տարածաշրջան: «Պոլիտիկո» *(“Politico”)* պարբերականը, օրինակ, իր վերլուծական հոդվածում ԱՄՆ-ի Միջազգային զարգացման հարցերով գործակալության (ՄԶԳ) հատկացրած միջազգային օգնության, հատկապես՝ քաղաքացիական հասարակությանը տրամադրվող ֆինանսական աջակցության, կասեցումն արդեն իսկ համարում է բարենպաստ հնարավորություն մի շարք տարածաշրջաններում Ռուսաստանի ազդեցության ուժեղացման համար:

Հնարավոր զարգացումները խորությամբ ընկալելու և օբյեկտիվորեն գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում համառոտակի խոսել այն գործոնների մասին, որոնց հետևանքով վերջին տարիներին փոփոխվել են Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության գերակայությունները: Այսինքն՝ նախ հասկանանք, թե գլխավորապես ի՛նչ հանգամանքներ են հիմք դարձել Հարավկովկասյան քաղաքականության, մասնավորապես՝ Հայաստանի ու Ադրբեջանի նկատմամբ տարիներ շարունակ տարվող քաղաքականության, վերանայման համար և ըստ այդմ փորձենք պարզել, թե որքան ազդեցություն դրանք կգործեն տեսանելի ապագայում:

Այդ գործոններն ամենից առաջ կապված էին այն մեծամասշտաբ աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ, որոնք հանգեցրին Ռուսաստան – Արևմուտք հարաբերությունների վատթարացմանը: Դեպի Արևելք ՆԱՏՕ-ի ծավալման պայմաններում 2014 թ. Ղրիմի վերամիավորումը և ապա Արևմտյան պատժամիջոցների կիրառումը իր շահերը պաշտպանելու նպատակով ոտքի կանգնող Ռուսաստանին մղեցին փնտրելու մեկուսացման հնարավոր վտանգից խուսափելու և առևտրատնտեսական գործունեություն վարելու նոր ուղիներ: Այդ գործում ուրույն դեր վերապահվեց անկախացումից ի վեր «Մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսով հանդես եկող Թուրքիային ու Ադրբեջանին: Դրան նպաստեցին Թուրքիա – Արևմուտք հարաբերություններում առաջացած հակասությունները, որոնք դրսևորվեցին ինչպես Եվրամիությանն անդամակցելու նկատմամբ տարիներ շարունակ ցուցաբերվող վերաբերմունքով, այնպես էլ թուրք-ամերիկյան հարաբերություններում տեղ գտած խութերով*: Էրդողանի համար Ռուսաստանն այն պետությունն էր, որը հնարավորություն էր ընձեռում Արևմուտքի հետ հակասությունների պայմաններում կյանքի կոչելու իր աշխարհաքաղաքական հավակնությունները: Հետևաբար երկուստեք գործակցությունը, առնվազն նշված շրջանից, հանգեցնում է նոր որակի հարաբերությունների. լինելով աշխարհաքաղա-

* 2016 թ. հեղաշրջման փորձը, որի համար մեղադրվող և ԱՄՆ-ում ապաստանած Ֆեթուլաի Գյուլենին Վաշինգտոնը հրաժարվել է հանձնել թուրքական իշխանություններին, 2017 թ. հակաօդային պաշտպանության ռուսաստանյան Ս-400 համակարգերի գնման պայմանագիրը՝ ամերիկյան համակարգերից հրաժարմամբ, 2019 թ. ԱՄՆ-ի հովանավորյալ քրդական ջոկատներին Թուրքիայի հասցրած հարվածները, իսկ մինչ այդ՝ դեռ 2003 թ., երբ Անկարան հրաժարվեց Վաշինգտոնին տրամադրել իր տարածքը Իրաք ներխուժելու համար, և ընդհանրապես էրդողանական Թուրքիայի «անկախ» քաղաքականությունը հակասում էին երկու պետությունների դաշնակցային հարաբերությունների տրամաբանությանը:

քական մրցակիցներ Մերձավոր Արևելքում, Ուկրաինայում, Հյուսիսային Աֆրիկայում և Հարավային Կովկասում՝ հանդես գալ որպես գործընկերներ և համագործակցել ամենատարբեր ոլորտներում: Դա էր պատճառը, որ 2015 թ. Սիրիայում թուրքական ուժերի կրակով ռուսաստանյան ռազմական ինքնաթիռի խոցումը, 2016 թ. Անկարայում Ռուսաստանի դեսպանի սպանությունը և այլ խնդրահարույց իրավիճակներ չխանգարեցին նրանց երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

Բացի Թուրքիայից, այդ գործում առանձնահատուկ կարևորություն ստացավ Ադրբեջանը, որն առանցքային դեր ունի Արևելքից Արևմուտք տարանցիկ լոգիստիկ ուղիների ապահովման, Իրանի հետ սահմանակցման, դեպի Պարսից ծոց ելքի հնարավորության և այլ տեսանկյուններից: Ինչպես Զ. Բժեզինսկին է նշել, Ադրբեջանը «Կասպից ծովի ավազանի և Կենտրոնական Ասիայի հարստություններով լի շշի խցանն է: Կենտրոնական Ասիայի պետությունների անկախությունը կարող է իմաստազրկվել, եթե Ադրբեջանն ամբողջապես ենթարկված լինի Մոսկվայի վերահսկողությանը…: Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի ապագան հույժ կարևոր է այն առումով, թե ինչ կարող է և ինչ չի կարող դառնալ Ռուսաստանը»[1]:

Այս և այլ հանգամանքների բերումով* 2020 թ. պատերազմին նախորդող և հաջորդող տարիներին ՌԴ-ի համար Հարավային Կովկասում մեծ կարևորություն ստացավ Ադրբեջանը, իսկ նրա հետ հարաբերությունների խորացումը հնարավոր էր նրա կենսական շահերին ըմբռնողական վերաբերմունքի դեպքում, ինչով էլ պայմանավորված էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային կերպափոխումները, հատկապես՝ ՀՀ-ի նկատմամբ: Դա է պատճառը, որ ՌԴ-ն Ուկրաինայում ռազմական գործողություններ սկսեց այն բանից ուղիղ երկու օր հետո, որ Ադրբեջանի հետ կնքեց «Դաշնակցային փոխգործության մասին» մոսկովյան հռչակագիրը[2]:

Հայաստան–Ռուսաստան հարաբերությունների զարգացման միտումները: Ներկայումս ստեղծվել են յուրահատուկ հարաբերություններ՝ Հայաստանում Ռուսաստանի հասցեին հնչող քննադատական հայտարարություններից մինչև նրա առաջնորդությամբ ստեղծված ՀԱՊԿ-ում անդամակցության սառեցումն ու ԵՄ-ին անդամակցությանն ուղղված քայլերը, իսկ մյուս կողմից՝ տնտեսական ու ռազմական ոլորտներում շարունակվող համագործակցությունը (ՌԴ-ն Հայաստանի համար մեկ առևտրատնտեսական գործընկերն է, Հայաստանում է գտնվում ռուսաստանյան զորակայանը):

Իրադարձությունների պարզ ներկայացմամբ, որը կառուցված է պատմական փորձի վրա և ունի որոշակի մեթոդաբանական հենք, հնարավոր է

[1] Տես *Zbigniew Brzezinski.* The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives. New York, 1997, PP. 46–47:

* Ներքաղաքական հանգամանքները դուրս են մեր վերլուծության շրջանակներից:

[2] Տես «Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Азербайджанской Республикой», 22 февраля 2022 г. (http://kremlin.ru/supplement/5777):

զարգացումների երկու հիմնական սցենար: Կանխատեսման ամենապարզ՝ միտումների արտարկման մեթոդի համաձայն՝ հասարակական-քաղաքական գործընթացները, սովորաբար, իներցիոն են, առավել ևս իներցիոն են դրանց միտումները: Սկզբունքն այն է, որ ապագան ձևավորվում է որոշակի գործոնների ազդեցությամբ, որոնք անցյալում խաղացել են վճռորոշ դեր: Այդ պատճառով տրամաբանական է ենթադրել, որ տարածաշրջանային քաղաքականության առանձին տարրերի՝ անցյալում եղած և ներկայումս ծավալվող գործընթացները կշարունակվեն նաև ապագայում: Ըստ այդմ՝ Ուկրաինայում հակամարտության շարունակման դեպքում, ամենայն հավանականությամբ, կպահպանվի հայ-ռուսաստանյան հարաբերությունների ներկայիս ընթացքը, այսինքն՝ ՀՀ-ն, մերձենալով Արևմուտքին, կհեռանա ՌԴ-ից: Մեթոդն արդյունավետ է կարճաժամկետ կանխատեսման պարագայում, երբ պայմանները մնում են կայուն որոշակի ժամանակահատվածում:

Բայց, քանի որ հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ ներկայումս ակտիվ քայլեր են ձեռնարկվում, առավել արդիական է դարձել այն հարցը, թե ինչպիսի ազդեցություն կունենա դա Հարավկովկասյան տարածաշրջանի, մասնավորապես՝ Հայաստանի, անվտանգային միջավայրի վրա: Կան կարծիքներ, որ Ուկրաինական հակամարտությունից հետո Ռուսաստանը, ինչպես պատմական տարբեր շրջափուլերում է եղել, կրկին կվերադառնա Անդրկովկաս: Պատմական համանմանության մեթոդը գործում է այն նախադրյալի հիմնավորմամբ, որ նախորդ իրադարձությունների զարգացման վերլուծությամբ կարելի է պատկերացում կազմել ներկա ու ապագա իրադարձությունների վերաբերյալ: Այսինքն՝ եթե անցյալում եղած մի իրադրություն նման է առկա իրադրությանը, ապա տրամաբանական է ենթադրել, որ վերջինիս փոփոխությունները նույնպես նման կլինեն անցյալում տեղի ունեցած փոփոխություններին[*]: Դրան կնպաստի Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերությունների ենթադրյալ կարգավորումը[**], իսկ մասշտաբային աշխարհաքաղաքական վերափոխումների և աշխարհը ազդեցության գոտիների բաժանելու հետևանքով[3] Հարավային Կովկասը կճանաչվի նրա կենսական

[*] Ռուսաստանի արտաքին քաղաքականության արևելյան ուղղությունը պատմականորեն դրվել է արևմտյանի համեմատությամբ երկրորդական դիրքում, և Ռուսաստանն Արևելյան գործերով, այդ թվում՝ Հարավային Կովկասով, զբաղվել է Արևմուտքում անելիքն ավարտելուց հետո:

[**] «Մենք կարող ենք ձևավորել մի մոդել, որը հնարավորություն կտա Ռուսաստանին և Միացյալ Նահանգներին, Ռուսաստանին և ՆԱՏՕ-ին համակեցություն հաստատելու՝ առանց միջամտելու միմյանց շահերի ոլորտներին»,– «Նյու Յորք Թայմզ» թերթին իր տված հարցազրույցում ասել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության և Անվտանգության խորհրդի խորհրդատվական խորհուրդների անդամ, Մոսկվայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն Ֆեոդոր Վոյտոլովսկին (տես *Anton Troianovski.* For Russia, Trump Has a Lot to Offer, Even Without a Ukraine Deal. “The New York Times”, 24 March 2025 (https://www.nytimes. com/2025/03/24/world/europe/trump-russia-putin-ukraine.html)):

[3] Աշխարհի՝ ազդեցության ոլորտների բաժանմանը վերադառնալու մասին տես *Monica Duffy Toft.* The Return of Spheres of Influence. Will Negotiations Over Ukraine Be a New Yalta Conference That Carves Up the World? “Foreign Affairs”, 13 March 2025 (https://www.foreignaffairs.com/united-states/return-spheres-influence):

շահերի գոտի՝ դրանից բխող հետևանքներով: Թերևս դրանով է պայմանավորված այն փաստը, որ վերջին շրջանում աստիճանաբար աճում են Ռուսաստանի ակտիվացումն ու նրա հետ հարաբերությունների բարելավման մասին խոսակցությունները[4]: Այն, որ նշված զարգացումներն իրենց ազդեցությունը կունենան նաև Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա, անվիճելի է: Սակայն այսքանով տրամաբանական այս շղթան ավարտվում է, քանի որ իրականությունն ավելի բազմազան է, քան ներկայացված է բերված սցենարներում:

Ռուսաստան–Արևմուտք հարաբերությունների կարգավորման հեռանկարները և դրանց ազդեցությունը Հարավային Կովկասում: Իրականում, թեև հակամարտության կարգավորման ուղղությամբ տեղի են ունենում ակտիվ բանակցություններ, մեր համոզմամբ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև երկարաժամկետ խաղաղության համար անհրաժեշտ նախադրյալներ դեռ չկան, ինչը մեծապես պայմանավորված է Արևմտյան պետությունների միջև կարգավորման տեսլականի հարցում հակադիր դիրքորոշումներով, բայց՝ ոչ միայն: Անգամ ԱՄՆ–Ռուսաստան հարաբերությունների կարգավորման դեպքում եվրոպական պետությունները և ՌԴ-ն կշարունակեն ակտիվ սպառազինման, երկարատև ռազմական ու տնտեսական մրցակցության խորացման քաղաքականությունը: Դա են վկայում իրենց անվտանգության համակարգը ձևավորելու և հակառուսաստանյան միջոցներ գործադրելու Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և այլ եվրոպական պետությունների նախաձեռնությունները, ինչը բխում է ՌԴ-ին որպես ռազմավարական սպառնալիք ընկալելու նրանց հիմնավորումից[5]:

Հետևաբար, եթե նույնիսկ ԱՄՆ–Ռուսաստան հարաբերությունները կարգավորվեն կամ ԱՄՆ-ը դադարեցնի Ուկրաինային աջակցության ցուցաբերումը և դուրս գա հակամարտությունից, ինչը ԱՄՆ-ում չեն բացառում,

[4] Այդ մասին են վկայում վերջին ամիսներին կողմերի ակտիվ շփումներն ու դրանց վերաբերյալ հնչեցվող պաշտոնական ու ոչ պաշտոնական հայտարարությունները: Օրինակ, տես, *Игорь Селезнёв*. Армения решила сблизиться с Россией. В Ереване ждут делегации из Москвы. «Независимая газета», 11.05.2025 (https://www.ng.ru/cis/2025-05-11/5_9249_armenia.html); «Пашинян дал позитивную оценку отношениям Еревана и Москвы в 2025 году». «Известия», 21.05.2025 (https://iz.ru/1890171/2025-05-21/pashinian-dal-pozitivnuiu-otcenku-otnosheniiam-erevana-i-moskvy-v-2025-godu); «Հայաստանի ԱԳ նախարարի հայտարարությունը և պատասխանները լրագրողների հարցերին Ռուսաստանի ԱԳ նախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսում», 21.05.2025 (https://www.mfa.am/hy/press-conference/2025/05/21/Mirzoyan_Lavrov/13239), «Հայ-ռուսական շփումների ակտիվացում. ընդդիմության և իշխանության բացատրությունները տարբեր են»: «Ազատություն ռադիոկայան», 25.05.2025 (https://www.azatutyun.am/a/hay-rousakan-shpoumneri-aktivatsoum-ynddimoutyan-ev-ishkhanoutyan-batsatroutyounnery-tarber-en/33358599.html); «Армянским госструктурам поручено активизировать связи с Россией: СМИ». «Голос Армении», 04.03.2025 (https://www.golosarmenii.am/article/230609/armyanskim-gosstrukturam-porucheno-aktivizirovat-svyazi-s-rossiej-smi):

[5] Տես, օրինակ, “Russia formally declared national security threat to Britain”. “The Telegraph”, 01.04.2025 (https://www.telegraph.co.uk/news/2025/04/01/russia-formally-declared-national-security-threat-britain/):

սակայն Ռուսաստանն ու Ուկրաինան չհամաձայնվեն հակամարտությանը վերջ տալու Վաշինգտոնի նախաձեռնություններին, ապա Ռուսաստանի և Եվրոպայի առաջատար պետությունների միջև լարվածությունը կպահպանվի դեռ երկար ժամանակ՝ դրանից բխող հետևանքներով[*]: Իսկ եթե Արևելքն ու Արևմուտքը Ուկրաինան դիտեն որպես հակամարտության բաղկացուցիչ մաս, ապա ինչպես Հ. Քիսինջերն է բնորոշել, Ռուսաստանի և Արևմուտքի ու հատկապես Ռուսաստանի և Եվրոպայի միջև համագործակցության միջազգային համակարգի հեռանկարները տասնամյակներ հետո ի չիք կդառնան[6]: Կարծում ենք՝ հակամարտության նման կարգավորումը բխում է նաև ԱՄՆ-ի շահերից: Դրդելով եվրոպական պետություններին ստանձնելու Ուկրաինայի և ընդհանուր առմամբ իրենց մայր ցամաքի անվտանգության պատասխանատվությունը՝ ԱՄՆ-ը հնարավորություն կունենա Ռուսաստանի և Եվրոպայի միջև հակամարտության շարունակականությամբ պահպանելու նրանց վրա ազդեցության լծակները, մյուս կողմից՝ ամբողջությամբ ուշադրությունն ու միջոցներն ուղղելու իր հիմնական ռազմավարական մրցակից Չինաստանի զսպմանը, այդ թվում՝ ՌԴ–Չինաստան փոխհարաբերությունների խորացման սահմանափակմամբ:

Մյուս կարևոր հանգամանքը կապված է աշխարհում ԱՄՆ-ի տեղի ու դերի վերաիմաստավորման առնչությամբ Թրամպի վարչակազմի տեսլականի հետ, ըստ որի՝ ամերիկյան հզորությունն ապահովելու նպատակով նա ակնհայտորեն ընտրել է տնտեսական դետերմինիզմի և կոնկրետ պետության (պետությունների) հետ խնդիրների լուծման աշխարհաքաղաքականությունը, ինչի հիմնավորումներն արդեն տեսանելի են[7]: Դա նշանակում է, որ Թրամպի կառավարման շրջանում տնտեսական-տրանսպորտային և լոգիստիկ ուղիների նկատմամբ գերտերությունների մրցակցությունը կմղվի ավելի առաջնային տեղ[8]: Էներգառեսուրսների արտահանման, տնտեսության զարգացման ու նոր ձևավորված այլ իրողություններում Ռուսաստանի համար ևս կենսական կարևորություն կունենա հաղորդակցության ուղիների բազմազանեցումը, ինչը նշանակում է, որ ՌԴ-ն կշարունակի զգալ ու կարևորել Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների պահպանումը:

Դրան կնպաստի այն գաղափարական հիմնավորումը, ըստ որի՝ վերջին

[*] Ըստ Հունգարիայի արտաքին գործերի և արտաքին տնտեսական կապերի նախարար Պ. Սիյարտոյի՝ ԵՄ-ի պետությունների մեծ մասը տրամադրված է շարունակելու հակամարտությունն Ուկրաինայում (տես «Сийярто: большинство стран ЕС настроены продолжать конфликт на Украине». «ТАСС», 18 марта 2025 (https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/23428579):

[6] Տես *З. Бжезинский, Г. Киссинджер.* Россия в американской геополитике. До и после 2014 года. М., 2018, с. 177:

[7] Տես *Ivo H. Daalder and James M. Lindsay.* The Price of Trump's Power Politics. Why China and Russia Stand to Win in a Might-Makes-Right World. "Foreign Affairs", 30 January 2025 (https://www.foreignaffairs.com/united-states/price-trumps-power-politics):

[8] Տես «Мишустин указал на усиление торговых войн и протекционизма в мире». «ТАСС», 28 апреля 2025 (https://tass.ru/ekonomika/23801633):

տարիներին Արևմուտք–Ռուսաստան հակասությունների խորացման հետևանքով Ռուսաստանը պետական մակարդակով ընդունել է ԽՍՀՄ փլուզումից հետո Արևմտյան կողմնորոշման ռազմավարական սխալը[9] և ընտրել եվրասիականության աշխարհառազմավարական ուղղությունը[10], ինչը նույնպես ենթադրում է տարածաշրջանի, մասնավորապես՝ թյուրքալեզու երկրների հետ, կապերի ակտիվացում: Բացի այդ, գերտերությունների մրցակցության ծանրության կենտրոնի՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան տեղափոխման հանգամանքը լրացուցիչ խթան կլինի Ադրբեջանի արժեքավորման համար, քանի որ նրա տարածքով է նախատեսվում Սանկտ Պետերբուրգից մինչև Մումբայ ձգվող «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի բազմաֆունկցիոնալ երթուղին, որի վերաբերյալ համաձայնագիրը հաստատել է Ի. Ալիևը[11]: Այն, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներն ուղղակիորեն առնչվում են տարածաշրջանի տնտեսական-տրանսպորտային հաղորդակցությունների հետ, այդ թվում՝ էներգակիրների արտահանման և տարանցման ուղիների բազմազանեցման մեծամասշտաբ նախագծերին, փաստում է նաև այս տարի Իրանի հետ ստորագրված ռազմավարական գործընկերության մասին պայմանագիրը[12]: Թերևս դա է պատճառը, որ չնայած Ադրբեջանն ինքնաթիռի խոցման հետ կապված միջադեպն օգտագործեց Ռուսաստանի հետ հարաբերություններում վերադիրքավորվելու համար՝ կոշտ քննադատությունների հետ մեկտեղ փակելով Բաքվում ռուսական մշակութային կենտրոնն ու «Ռոսիա սեգոդնյա» մեդիախմբի «Սպուտնիկ-Ազերբայջան» ներկայացուցչությունը, ՌԴ-ն պատասխան քայլեր չձեռնարկեց, այլ հակառակը՝ հանդես եկավ լարվածությունը լիցքաթափելու նախաձեռնություններով[*]: Եվ թեկուզ Բաքուն դրան զուգահեռաբար աշխատում է Իսրայելի աջակցությամբ ԱՄՆ-ի նոր վարչակազմի հետ ռազմավարական հարաբերություններ կառուցելու ուղղությամբ[**], ինչն ուղղված է Ռուսաստանի ազդե-

[9] Տես «Выступление Министра иностранных дел Российской Федерации С. В. Лаврова на презентации Департамента партнерства с Африкой». Москва, 4 февраля 2025 г. (https://mid.ru/ru/foreign_policy/news/1994570/):

[10] Տես «Основные внешнеполитические итоги 2024 года», 27.12.2024 (https://mid.ru/ru/foreign_policy/news/1989553/):

[11] Տես «Алиев утвердил соглашение с РФ о грузоперевозках по МТК "Север–Юг"». «ТАСС», 11 февраля 2025 (https://tass.ru/ekonomika/23110241):

[12] Տես «Переговоры с Президентом Ирана Масудом Пезешкианом», 17 января 2025 (http://www.kremlin.ru/events/president/news/76125):

[*] Օրինակ՝ Մոսկվայում տեղի ունեցավ Հեյդար Ալիևի հուշարձանի հիմնարկեքի արարողությունը, սկսվեցին վթարված ինքնաթիռի փոխհատուցումները, Ադրբեջան այցելեց ՌԴ Դաշնային ժողովի պատվիրակությունը՝ Դաշնության խորհրդի նախագահի գլխավորությամբ:

[**] Ըստ «Ջերուսալեմ Փոստ»-ի՝ Իսրայելը ԱՄՆ-ի հետ վարում է շարունակական քննարկումներ Իսրայելի, Ադրբեջանի և ԱՄՆ-ի միջև եռակողմ համագործակցության ամուր հիմքեր ստեղծելու մասին (տես “Israel seeks to remove sanctions in ‘strategic alliance’ with Azerbaijan”. “The Jerusalem Post”, 6 March 2025 (https://www.jpost.com/israel-news/article-845076)):

ցությունից վերջնականապես ձերբազատվելու խնդրին[*], այդուհանդերձ կարծում ենք, որ նշված հանգամանքների բերումով Ռուսաստանը առաջիկա տարիներին կշարունակի Ադրբեջանի հետ տարբեր ոլորտներում փոխգործությունը պահպանելուն ուղղված մարտավարությունը՝ առավել նպաստավոր հանգամանքներում իր ազդեցությունը վերականգնելու նպատակով:

Բացի Կենտրոնական Ասիայի ու Կասպից ծովի ավազանի էներգառեսուրսներից ու հաղորդակցության ուղիների վերահսկումից, տարածաշրջանի նկատմամբ Արևմուտքի հետաքրքրության պահպանումը պայմանավորված կլինի Իրանով: Արևմուտքի փորձագիտական շրջանների համոզմամբ՝ Ադրբեջանը աշխարհում միակ երկիրն է, որը սահմանակից է և՛ Ռուսաստանին, և՛ Իրանին, հետևաբար ամերիկյան շահերից է բխում նրա հետ սերտ հարաբերությունների հաստատումը, ինչը հնարավորություն է թե՛ Արևմուտքի դեմ միասին գործելու նրանց ջանքերը խաթարելու, թե՛ ուժերի հավասարակշռությունը ավելի լայն տարածաշրջանում պահպանելու համար[13]: Եթե հաշվի առնենք ԱՄՆ – Ադրբեջան հարաբերությունների սերտացմանն ուղղված Իսրայելի նախաձեռնությունները[**], ապա կարելի է ենթադրել, որ անհրաժեշտության դեպքում Վաշինգտոնը կօգտագործի Բաքու–Երուսաղեմ հարաբերությունները Իրանին ճնշելու համար: Հետևաբար այն ընկալումը, որ ռուս-ամերիկյան հարաբերությունների վերաբեռնման հետևանքով տարածաշրջանը միանշանակ կերպով կանցնի Ռուսաստանի հովանու ներքո, համոզիչ չէ: Նշվածի համատեքստում եթե ոչ ԱՄՆ-ի[***], ապա տարածաշրջանային դաշնակիցների և ՌԴ շահերի մրցակցության տիրույթում կմնան Հարավային Կովկասի տնտեսական-տրանսպորտային կապուղիների վերահսկողության խնդիրները[14]:

---

[*] Պետդումայի՝ ԱՊՀ հարցերով կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Կ. Զատուլինի համոզմամբ՝ Լեռնային Ղարաբաղից հետո Բաքուն այլևս Ռուսաստանի կարիքը չուներ (տես «Баку потребовал закрыть "Русский дом", поскольку после Карабаха нужда в РФ отпала: Затулин». «Sputnik Армения», 06.02.2025 (https://am.sputniknews.ru/20250206/baku-potreboval-zakryt-russkiy-dom-poskolku-posle-karabakha-nuzhdav-rf-otpala-zatulin-85537284.html)):

[13] Տես *Kamran Bokhari.* Azerbaijan And U.S. Western Eurasia Strategy. Washington could leverage the Baku–Jerusalem relationship to contain Iranian geopolitical ambitions, 4 February 2025 (https://nationalinterest.org/blog/silk-road-rivalries/azerbaijan-western-eurasia-strategy):

[**] Ըստ «Ջերուսալեմ Փոստ»-ի՝ Քնեսեթում Նեթանյահուի հայտարարությունից և ավագ ռաբբիների աջակցության նամակից հետո Թրամպի բանագնացը ժամանել է Բաքու՝ ամրապնդելու երկրների միջև եռակողմ դաշինքը: Իսրայելական կողմը դա համարում է Իսրայելի, ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև լավ համակարգված դիվանագիտական քայլ (տես “Trump envoy Witkoff in Azerbaijan for talks after Netanyahu, rabbis' involvement”. “The Jerusalem Post”, 14 March 2025 (https://www.jpost.com/international/article-846086)):

[***] ԱՄՆ-ի Պետքարտուղար Մարկո Ռուբիոն ամերիկյան Կոնգրեսի Սենատի միջազգային հարցերի կոմիտեում ունեցած ելույթում արձանագրեց, որ ԱՄՆ-ն աջակցում է Թուրքմենստանից դեպի Եվրոպա ձգվող գազամուղի շինարարությանը, որն անցնելու է Ադրբեջանով (տես “Secretary Rubio testifies before the Senate Committee on Foreign Relations”, 20 May 2025 (https://www.youtube.com/watch?v=k844KDEd34Q)):

[14] Տարածաշրջանով Թրամպի վարչակազմի հետաքրքրվածության մասին տես

Հայաստան–Ռուսաստան հարաբերությունների հեռանկարը: Իհարկե, մեծ աշխարհաքաղաքական հավակնություններ ներկայացրած Ռուսաստանը կշարունակի Հարավային Կովկասը, այդ թվում՝ Հայաստանը, իր ազդեցության ոլորտում պահելուն նպատակաուղղված ջանքերը: Դա է վկայում, օրինակ, Հայաստանի հետ Կրեմլի քաղաքականությունը համակարգողի փոփոխությունը. այժմ այդ պաշտոնում նշանակվել է ՌԴ Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ, նախկին վարչապետ Սերգեյ Կիրիենկոն, որը համարվում է վարչակազմի առանցքային դեմքերից մեկը[15]: Սակայն տնտեսական-տրանսպորտային հաղորդակցության ուղիների վերահսկողության, ինչպես նաև Հարավային Կովկասում իր ազդեցությունը պահպանելու համար Ռուսաստանն ստիպված կլինի հաշվի առնել աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային կշիռը բավական մեծացրած Թուրքիային, որի հետ կշարունակվի ուղիղ առճակատումից խուսափելու՝ մրցակցային համագործակցության քաղաքականությունը: Ինչպես իր աշխարհաքաղաքական կշիռը մեծացնելու համար, այնպես էլ Մերձավոր Արևելքում ներգրավվածության հետևանքով առայժմ անհրաժեշտ ռեսուրսներ չունեցող Թուրքիան իր հերթին կշարունակի զգալ Ռուսաստանի կարիքը, դրա հետ մեկտեղ Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Հայաստանում, Ռուսաստանի ազդեցությունը թուլացնելու քաղաքականությունը առժամանակ փոխանցելով Ադրբեջանին և նրա պահանջների կատարումը ներկայացնելով որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախապայման:

Բացի այդ, փոխվել են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի հայկական ընկալումները: Ռուսաստանն այլևս չի դիտվում որպես այնպիսի դաշնակից, որը պատրաստ է Հայաստանին պաշտպանելու երրորդ կողմի հարձակումներից: Եվ սա ոչ միայն ընկալման խնդիր է, այլև պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր աշխարհակարգի ձևավորվող միջազգային քաոսային միջավայրում պետության գոյատևման համար դաշնակցային հարաբերությունները բավարար չեն: Իսկ դատելով միջազգային հարաբերությունների զարգացման ներկայիս դինամիկայից՝ կարելի է ենթադրել, որ առաջիկա տասնամյակներում համեմատաբար կայուն դաշնակցային հարաբերությունները լինելու են հազվագյուտ երևույթ[16]:

Հարկ է ընդունել նաև այն իրողությունը, որ Հայաստանում հասարակության մի մասը հակված չէ համարելու, որ ռուսամետ կողմնորոշումը չունի այլընտրանք: Եվ այս հանգամանքն ստիպված կլինեն հաշվի առնել Հայաս-

Matthew Boyle. Exclusive - Witkoff: ‘Big Energy’ for Abraham Accords Expansion, Four to Six Countries May Join ‘In Next Couple of Months’. “Breitbart”, 13 May 2025 (https://www.breitbart.com/politics/2025/05/13/exclusive-witkoff-big-energy-for-abraham-accords-expansion-four-to-six-countries-may-join-in-next-couple-of-months/):

[15] Տես «Куратором отношений с Арменией в администрации президента стал Сергей Кириенко». «Ведомости», 30.04.2025 (https://www.vedomosti.ru/politics/articles/2025/04/30/1107619-kuratorom-otnoshenii-s-armeniei-stal-kirienko):

[16] Տես *Тимофей Бордачев.* Союзы и союзники в новую эпоху, 24 июня 2024 (https://russiancouncil.ru/analytics-and-comments/comments/soyuzy-i-soyuzniki-v-novuyu-epokhu/):

տանի բոլոր իշխանությունները: Դրա հետ մեկտեղ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը՝ բազմաթիվ հիմնախնդիրներով հանդերձ, դիտվում է որպես հնարավորություն՝ թե՛ տնտեսական զարգացման, թե՛ անվտանգային նկատառումներով, ինչի համար ներկայումս այն դարձել է ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը[17]:

Ասվածն ամենևին էլ չի նշանակում, թե Ռուսաստանը կորցրել է տարածաշրջանի վրա ազդելու հնարավորությունները և անվտանգային առումով Հայաստանը կախված չէ նրանից: Վերջին տարիներին, ի հակադրություն ռազմականի, զգալիորեն աճել են առևտրատնտեսական ցուցանիշները, հետևաբար դա կլինի զսպող գործոն մեր արտաքին քաղաքականության վերափոխման գործում: Ուրեմն, առանց թերագնահատելու կամ գերագնահատելու Ռուսաստանի հետ հարաբերությունները, պետք է նշել, որ մեր վերլուծության հիմնական եզրահանգումը բխում է այն ենթադրությունից, որ Ուկրաինական հակամարտության կարգավորմանն ուղղված ներկայիս քայլերի հետևանքով ոչ թե պրոբլեմն ամբողջապես կհանգուցալուծվի, այլ կպահպանվի Եվրոպայի հետ Ռուսաստանի լարվածությունը, ինչի պատճառով վերջինս ստիպված կլինի շարունակել զգալի ջանքեր ու միջոցներ վատնել Արևմուտքի ուղղությամբ[*]:

Սակայն անկախ համաշխարհային զարգացումների բնույթից՝ Ռուսաստանն առաջիկա տարիներին կմնա Հարավային Կովկասում առավել ազդեցիկ խաղացողներից մեկը: Դեպի Արևմուտք Հայաստանի կողմնորոշման պայմաններում չափազանց կարևոր է ՌԴ-ի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը, ինչը կարող է արվել նաև մեծացնելով իր ներկայացվածությունը ամենաստվար հայկական սփյուռքն ունեցող միջավայրում, որտեղ Ադրբեջանն ունի բացահայտ գերակշռություն, և այն օգտագործում է Ռուսաստանում հակահայկական տրամադրությունների ինտենսիվ տարածման համար[18]:

Հետևաբար պետք է ոչ թե ընտրել ապագա համաշխարհային հակամարտության կողմերից մեկին՝ դառնալով նրա շահերի կրողը, այլ պահպանել ուժի համաշխարհային կենտրոնների միջև հավասարակշռությունը՝ պաշտպանելով ազգային շահերը:

---

[17] Տես «Վարչապետը հարցազրույց է տվել թուրքական լրատվամիջոցների ներկայացուցիչներին», 13.03.2025 (https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2025/03/13/Nikol-Pashinyan-Interview/):

[*] Ամերիկյան քաղաքագետ Ջ. Միրշայմերի համոզմամբ՝ «Ուկրաինայում տեղի ունեցող մարտական գործողությունները թունավոր քաղաքական իրավիճակ են ստեղծել Եվրոպայում: Այն շուտ չի անհետանա: Մասնավորապես՝ Ռուսաստանի և Եվրոպայի միջև հարաբերությունները երկար ժամանակ շատ լարված կմնան: Լավագույն դեպքում, Ուկրաինայի և Ռուսաստանի միջև հակամարտությունը կմտնի սառեցված փուլ, բայց կարող է կրկին բռնկվել ցանկացած պահի» (տես *Benedict Neff.* John Mearsheimer: «Ich hätte dasselbe getan wie Putin. Ich hätte die Ukraine sogar noch früher überfallen». “NZZ”, 06.05.2025 (https://www.nzz.ch/international/john-mearsheimer-ich-haette-dasselbe-getan-wie-putin-ich-haette-die-ukraine-sogar-noch-frueher-ueberfallen-ld.1882659)):

[18] Տես *Հ. Ա. Փաշայան,* Ռուսաստանում ադրբեջանական լոբբիի ազդեցությունը հայ-ռուսաստանյան հարաբերությունների վրա: «ՀԲ», 2025, հմ. 1:

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ОТНОШЕНИЙ АРМЕНИЯ – РОССИЯ В УСЛОВИЯХ ТРАНСФОРМАЦИИ МИРОПОРЯДКА И УКРАИНСКОГО КОНФЛИКТА

Г. А. ПАШАЯН, кандидат политических наук, доцент, ученый-аналитик Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Данное исследование зиждется на том предположении, что в результате нынешних шагов по урегулированию конфликта на Украине проблема не только не будет полностью разрешена со всеми своими последствиями, но и сохранится напряженность между Россией и Европой. Вследствие этого Россия будет вынуждена и в дальнейшем тратить значительные усилия и средства в направлении Запада, из-за чего будет лишена возможности восстановить свое влияние на Южном Кавказе в прежних масштабах.

Кроме того, изменилось армянское восприятие как России, так и Турции. Россия больше не рассматривается как союзник, готовый защитить Армению от нападений третьей стороны. В то же время урегулирование армяно-турецких отношений, несмотря на наличие многочисленных проблем, рассматривается как благоприятная возможность как для экономического развития, так и в отношении безопасности, в связи с чем в настоящее время оно стало одним из приоритетов внешней политики РА.

Однако вне зависимости от характера глобальных процессов Россия в ближайшие годы останется одним из самых влиятельных игроков на Южном Кавказе. А это значит, что в условиях ориентации Армении на Запад крайне важно поддерживать добрососедские отношения с РФ. Следовательно, в связи с необходимостью обеспечения национальной безопасности Армении следует не выбирать одну из сторон будущего мирового конфликта, став носителем ее интересов, а соблюдать баланс между мировыми центрами силы, отстаивая наши национальные интересы.

REGIONAL SECURITY

PERSPECTIVES OF DEVELOPING ARMENIA – RUSSIA RELATIONS IN TERMS OF THE WORLD ORDER TRANSFORMATION AND THE UKRAINIAN CONFLICT

H. A. PASHAYAN, PhD in Political Sciences, Associate Professor, Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The above study rests upon the assumption that due to the results of the present efforts aimed at the conflict settlement in the Ukraine, the problem will not be fully solved with all of its consequences; moreover, the tension between Russia and Europe will keep on. As a result, Russia will be bound to spare substantial efforts and resources in the direction of the West, this resulting in that it will be deprived of the opportunity to restore its influence in the South Caucasus to its previous scale.

Moreover, the Armenian perception of both Russia and Turkey has changed. Russia is no longer viewed as an ally ready to protect Armenia from a third party attacks. Meanwhile, notwithstanding the actuality of the numerous problems, the settlement of Armenian-Turkish relations is perceived as a favorable prerequisite for both economic development and security matters, for which it has nowadays become one of Armenia's foreign policy priorities.

However, despite dependence on the nature of global processes, in the years to come Russia will remain one of the most influential players in the South Caucasus. This means that in respect to Armenia's orientation towards the West, maintaining good neighborly relations with the Russian Federation is of utmost significance. Consequently, in connection with the need to ensure national security, instead of choosing one of the parties to a future world conflict and becoming the bearer of its interests, Armenia should maintain a balance between the world centers of power, defending our national interests.